



«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՄՍՏՍՎԱԾ Է
“ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
ԽՈՐՀՐԴԻ 25.09.2007թ. թիվ 011 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ՝
ԽՈՐՀՐԴԻ 13.04.2016թ. թիվ 17 ՈՐՈՇՄԱՄԲ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ	3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	5
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ	5
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ	8
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	8
7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻՉԱ)	9
8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ	10
9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ	11
10. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊԵՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ	11
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	15
12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	18

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Յամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության կանոնները (այսուհետև՝ Կանոններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Յամաքային ավտոտրանսպորտային միջոցների (այսուհետև՝ Ավտոտրանսպորտային միջոց) օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Յամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության» դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրի կամ վկայագրի (այսուհետև՝ ապահովագրության պայմանագիր) անբաժանելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել նաև այլ պայմաններ, որոնք որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետև՝ Կողմեր) փոխադարձ համաձայնությամբ և չպետք է հակասեն Կանոններին, օրենքին և այլ իրավական ակտերին:

1.4. Կանոններով «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ **Ապահովագրող**), գործելով օրենքին, իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան, կնքում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրեր՝ Կանոններով նախատեսված դեպքերում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու համար:

1.5. Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքող անձ (այսուհետև՝ **Ապահովադիր**) կարող են հանդիսանալ իրավաբանական և գործունակ ֆիզիկական անձինք:

Անձը, որի պատասխանատվությունը երրորդ անձանց պատճառված վնասի համար ապահովագրված է (այսուհետև՝ **Ապահովագրված անձ**) պետք է նշված լինի ապահովագրության պայմանագրում: Եթե ապահովագրության պայմանագրում ապահովագրված անձ նշված չէ, ապա ապահովագրված է համարվում Ապահովադրի պատասխանատվությունը:

1.6. Կանոնների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի օգտին (այսուհետև՝ **Շահառու**), որոնց կարող է վնաս պատճառվել ապահովագրության պայմանագրում նշված տրանսպորտային միջոցների կողմից:

1.7. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադիրն հանձնվում է Կանոնների մեկ օրինակը, ինչի մասին համապատասխանաբար նշում է կատարվում ապահովագրության պայմանագրում: Կանոնները համարվում են ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովադրի և Ապահովագրողի համար:

1.8. Կանոնների համաձայն կարող է ապահովագրվել մարդատար և բեռնատար ավտոմեքենաների, ավտոբուսների, մոտոցիկլետների, տրակտորների և այլ գյուղատնտեսական տեխնիկայի (ընդհանուր օգտագործման ճանապարհներով շարժման ժամանակ) սեփականատիրոջ պատասխանատվությունը:

1.9. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Կողմերը կարող են փոխհամաձայնության գալ Կանոնների առանձին կետերի փոփոխման (բացառման) համար կամ լրացնել ապահովագրության պայմանագիրը Կանոնների տեքստում շարադրված դրույթներից տարբեր դրույթներով, պայմանով, որ շեղումը Կանոնների դրույթներից չի հակասի օրենքին և այլ իրավական ակտերին և չի ընդլայնի Կանոններով նախատեսված Ապահովագրողի պարտավորությունները:

1.10. Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

1.10.1. Ավտոտրանսպորտային միջոց՝ հարմարանք, որը նախատեսված է մարդ, բեռ կամ դրանց վրա տեղադրված սարքավորումներ ճանապարհով տեղափոխելու համար, որոնք ունեն ավելի քան 50կմ/ժ առավելագույն կոնստրուկտիվ արագություն: «Ավտոտրանսպորտային միջոց» տերմինը տարածվում է նաև ցանկացած տիպի տրակտորների և ինքնագնաց մեքենաների վրա:

1.10.2. Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր՝ անձ, որին սեփականության (տիրապետման, օգտագործման, տնօրինման) իրավունքով պատկանում է ավտոտրանսպորտային միջոցը:

1.10.3. Տուժած անձինք՝

ա) քաղաքացիներ, որոնց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառվել է վնաս և որոնք ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով պատճառված վնասների արդյունքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ունեն փոխհատուցման պահանջի իրավունք,

բ) իրավաբանական անձինք, որոնց գույքին պատճառվել է վնաս և որոնք ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով պատճառված վնասների արդյունքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ունեն փոխհատուցման պահանջի իրավունք:

1.10.4. Ապահովագրված անձ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը հանդիսանում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ավտոտրանսպորտային միջոցը վարելու լիազորագիր կամ այլ օրինական հիմք ունեցող անձ և նշված է ապահովագրության պայմանագրում:

1.10.5. Ծանապարհատրանսպորտային պատահար՝ պատահար, որը տեղի է ունեցել ավտոտրանսպորտային միջոցի ճանապարհով շարժման ընթացքում կամ վերջինիս մասնակցությամբ, որի հետևանքով մահացել կամ վիրավորվել են մարդիկ, վնասվել են տրանսպորտային միջոցներ, գույք (սարքավորումներ, բեռներ և այլն) կամ պատճառվել է այլ նյութական վնաս:

1.11. Այն դեպքում, երբ Ապահովադիրն իրավաբանական անձ է, ապա Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում Ապահովադրի առջև, եթե ապահովագրական դեպքը հետևանք է Ապահովադրի աշխատակցի կողմից Ապահովադրին պատճառված նյութական վնասի:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿՆՋՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Կանոններով կնքված ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության պայմանագրով պայմանավորված վճարի դիմաց (այսուհետև՝ ապահովագրավճար) ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Կանոններով սահմանված կարգով վճարել ապահովագրական հատուցում: Ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի չափը:

2.2. Ապահովագրության պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովադրի բանավոր հայտարարությունը կամ գրավոր դիմում-հայտարարությունը՝ Ապահովագրողի պահանջով և վերջինիս կողմից սահմանված ձևով:

2.3. Ապահովագրության պայմանագրի կնքման համար Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել՝

ա) ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության (տնօրինման, տիրապետման, օգտագործման) իրավունքը հաստատող փաստաթղթերը,

բ) Ապահովադրի տվյալները,

գ) տեխնիկական անձնագիրը (պետական գրանցման վկայականը)՝ բացառությամբ Կանոնների 2.8 կետով նախատեսված դեպքերի,

դ) ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման (շահագործման) լիազորագիրը կամ վարձակալության պայմանագիրը (իրավաբանական անձանց հետ կնքվող պայմանագրերում շահագործման իրավունք ունեցող անձանց ցուցակը) կամ այլ օրինական հիմք,

ե) ապահովագրված անձանց տվյալները՝ այդ թվում՝ վարորդական իրավունքի վկայականի պատճենը, ապահովագրված անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցի տիրապետման և օգտագործման օրինական հիմքը (հիմքերը),

զ) այլ փաստաթղթեր կամ դրանց պատճենը, եթե այդպիսիք կպահանջի Ապահովագրողը:

2.4. Ապահովագրության փաստը հավաստվում է Ապահովագրողի և Ապահովադրի միջև ապահովագրության պայմանագրի կնքմամբ և Ապահովադրին ապահովագրության պայմանագրի (վկայագրի) տրամադրմամբ:

2.5. Ապահովագրողն ապահովագրության մասին գրավոր կամ բանավոր հայտարարություն ստանալուց հետո իրավունք ունի Ապահովադրից պահանջել՝

2.5.1 ավտոտրանսպորտային միջոցի զննում անցկացնելու հնարավորության ապահովում,

2.5.2 այլ լրացուցիչ տվյալների ներկայացում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետ կապված հնարավոր վնասների հանգամանքների հետ:

2.6. Եթե ապահովագրության պայմանագրի կնքելուց կամ ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո պարզվի, որ Ապահովադրին իր հայտարարության կամ Ապահովագրողի կողմից կատարված հարցադիմումների պատասխանների մեջ նախօրոք հայտնել է ոչ հավաստի և աղավաղված տվյալներ, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրության պայմանագիրը միակողմանի լուծել և մերժել ապահովագրական հատուցումը:

2.7. Ապահովագրության պայմանագիրը կարող է նախատեսել պատասխանատվության ապահովագրություն Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից՝

2.7.1 կոնկրետ ավտոտրանսպորտային միջոցի շահագործման դեպքում: Այս դեպքում ապահովագրության պայմանագրում պետք է նշված լինի ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման վկայականի համարը և ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական տվյալները: Եթե ավտոտրանսպորտային միջոցն օրենսդրությամբ սահմանված կարգով դեռևս չի ստացել պետական գրանցում կամ սահմանված կարգով ավտոտրանսպորտային միջոցին տրված են «Տարանցիկ» (տրանզիտ) ռեգիստրացիոն նշաններ, որոնց գործողության ընթացքում ավտոտրանսպորտային միջոցը ենթակա չէ պետական գրանցման կամ ավտոտրանսպորտային միջոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա չէ պետական գրանցման, ապա ապահովագրության պայմանագրում նշվում են ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական տվյալները, նույնականացման համարը և այլն: Այն դեպքում, երբ ավտոտրանսպորտային միջոցների համար սահմանված կարգով տրված են «Տարանցիկ» (տրանզիտ) ռեգիստրացիոն նշաններ, ապա տվյալ ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել մինչև «Տարանցիկ» (տրանզիտ) ռեգիստրացիոն նշանների գործողության ժամկետի ավարտի օրը:

2.7.2 Ապահովագրության պայմանագրում նշված տիպի ավտոտրանսպորտային միջոցի շահագործման դեպքում:

2.8. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել մինչև ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման պահը, եթե չեն խախտվել ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման համար նախատեսված ժամկետները: Այս դեպքում ապահովագրության պայմանագրում նշվում են ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական տվյալները, իսկ Ապահովադիրը պարտավոր է ապահովագրության պայմանագրում սահմանված ժամկետում ներկայացնել տվյալ ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման վկայականը (տեխնիկական անձնագիրը): Եթե ապահովագրության պայմանագրում սահմանված ժամկետներում Ապահովադիրը Ապահովագրողին չի ներկայացնում տվյալ ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման վկայականը (որը կարող է առաքվել փոստով կամ հավաստվել Ապահովագրողի կողմից փաստաթղթի ստացման համար պատասխանատու անձի համապատասխան նշումով կամ կարող է ստացվել Ապահովագրողի ֆաքսի համարով), ապա Ապահովագրողն ապահովագրական

պատահարների համար Ապահովադրի (Շահառուի) նկատմամբ պատասխանատվություն չի կրում ապահովագրության պայմանագրում տվյալ ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման վկայականի (տեխնիկական անձնագրի) ներկայացման համար սահմանված ժամկետի վերջին օրվա 24.00 ժամից մինչև այն ստանալու օրվանը հաջորդող օրվա 00:00 ժամը: Ապահովագրողն Ապահովադրի (Շահառուի) նկատմամբ պատասխանատվություն չի կրում նաև այն ապահովագրական պատահարների համար, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրով սահմանված Ապահովադրի կողմից ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման վկայականի (տեխնիկական անձնագրի) Ապահովագրողին ներկայացման համար սահմանված ժամկետներում, սակայն ապահովագրական պատահար տեղի ունենալու պահի դրությամբ Ապահովադիրը խախտել է ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման համար օրենսդրությամբ նախատեսված (թույլատրված) ժամկետները:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԸ

3.1. Համաձայն Կանոնների **ապահովագրության օբյեկտ** են համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը՝ կապված ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ քաղաքացիական պատասխանատվության ռիսկի հետ, որոնք առաջացել են ապահովագրության պայմանագրում նշված տարածքում ավտոտրանսպորտային միջոցի շահագործման ժամանակ երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասների հետևանքով:

3.2. Կանոններով ապահովագրության ենթակա են՝

ա) սահմանված կարգով պետավտոտեսչությունում պետական գրանցում ստացած և տեխնիկական զննություն անցած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվությունը՝ բացառությամբ Կանոնների 2.8 կետով նախատեսված դեպքերի,

բ) սահմանված կարգով «Տարանցիկ» (տրանզիտ) ռեգիստրացիոն նշաններ ունեցող և ապահովագրության պայմանագրի կնքման օրը դրանց գործողության ժամկետը չլրացած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվությունը:

3.3. Ապահովագրության տարածքն այն տարածքն է, որի սահմանների ներսում տեղի ունեցած ապահովագրական պատահարների համար Ապահովագրողը կրում է Կանոններով նախատեսված պատասխանատվություն: Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Կանոնների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրում ապահովագրության տարածք է համարվում բացառապես Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական տարածքը:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Կանոնների համաձայն **Ապահովագրական պատահար է համարվում** Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրության պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության տարածքում շահագործման հետևանքով տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը, որն չէ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմք է հանդիսանում տուժած անձանց կողմից վնասի փոխհատուցման պահանջի համար և կապված է միայն՝

ա) այլ ավտոտրանսպորտային միջոցների վնասվելու կամ ոչնչանալու հետ,

բ) այլ ավտոտրանսպորտային միջոցներում գտնվող գույքի վնասվելու կամ ոչնչանալու հետ,

գ) այլ շարժական կամ անշարժ գույքի հետ շարժական ավտոտրանսպորտային միջոցի բախվելուց առաջացած վնասի կամ ոչնչանալու հետ,

դ) ֆիզիկական անձանց մահվան կամ աշխատունակության (ժամանակավոր կամ մշտական) կորստի հետ:

4.2. Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա **ապահովագրական պատահարներ չեն համարվում** և ըստ այդմ էլ չեն հատուցվում Կանոնների 4.1. կետում նշված իրադարձությունները, որոնց արդյունքում վնաս է պատճառվել՝

4.2.1. ապահովագրության պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի վարորդին, ուղևորին, կամ դրանում գտնվող գույքին,

4.2.2. ֆիզիկական անձ հանդիսացող Ապահովադրի (Ապահովագրված անձի) ընտանիքի անդամներին, նրա խնամակալության տակ գտնվողներին, կամ այլ քաղաքացիների կամ նրանց գույքին, որոնք Ապահովադրի (Ապահովագրված անձի) հետ վարում են ընդհանուր տնտեսություն,

4.2.3. իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադրի (Ապահովագրված անձի) աշխատակիցներին,

4.2.4. Ապահովադրին՝ Ապահովագրված անձի կողմից,

4.2.5. Ապահովադրին (Ապահովագրված անձին) պատկանող, նրա կողմից օգտագործվող կամ տնօրինվող գույքին, կամ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ցանկացած հիմքով Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ստացված գույքին,

4.2.6. ապահովագրության պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցը մրցություններում, փորձարկումների կամ ուսուցողական նպատակով երթերի ժամանակ դրանց համար նախատեսված հատուկ նախապատրաստված տեղերում օգտագործելու հետևանքով երրորդ անձանց կյանքին կամ նրանց գույքին, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

4.2.7. շրջակա բնական միջավայրին,

4.2.8. հնաճ կամ այլ առանձնահատուկ (ունիկալ) առարկաներին, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերին կամ մետաղներին, մշակութային արժեքներին, հավաքածուներին, նկարներին, ձեռագրերին, դրամական նշաններին կամ արժեթղթերին,

4.2.9. երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով հարկադրաբար Ապահովադրի (Ապահովագրված անձի) տիրապետումից դուրս հայտնված ավտոտրանսպորտային միջոցի կողմից:

4.3 Համաձայն Կանոնների **ապահովագրական պատահար** չեն համարվում Կանոնների 4.1. կետում նշված իրադարձությունները, եթե դրանք տեղի են ունեցել հետևյալներից առնվազն մեկի արդյունքում՝

4.3.1 Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) դիտավորության արդյունքում.

4.3.2 ալկոհոլի (տոկսիկ նյութերի, թմրանյութերի) ազդեցության տակ գտնվող անձի կողմից ավտոտրանսպորտային միջոցի վարման հետևանքով.

4.3.3 ավտոտրանսպորտային միջոցը հանցագործության առարկա կամ միջոց հանդիսանալու արդյունքում.

4.3.4 ավտոտրանսպորտային միջոցն անսարք վիճակում օգտագործելու դեպքում, եթե ավտոտրանսպորտային միջոցի շահագործումն անթույլատրելի է, բացառությամբ այն դեպքերի, երբ վարորդը հնարավորություն չի ունեցել հայտնաբերել անսարքությունը նախքան վնաս տեղի ունենալը.

4.3.5 ավտոտրանսպորտային միջոցն ապահովագրության պայմանագրում նշված Ապահովագրված անձից (անձանցից) բացի այլ անձանց կողմից վարման,

4.3.6 առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) ավտոտրանսպորտային միջոցը վարելու արդյունքում կամ հատուկ թույլտվության գործողության ժամկետի ավարտից հետո, եթե օրենսդրությամբ նախատեսված է այդպիսի թույլտվության (լիցենզիայի) ստացում,

4.3.7 ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար նախատեսված հատուկ թույլտվության (լիցենզիայի) պահանջների խախտման դեպքում, եթե այդպիսի թույլտվությունը նախատեսված է օրենսդրությամբ.

4.3.8 ավտոտրանսպորտային միջոցի ուղևորների տեղավորման կամ բեռնվածության չափի ապահովագրության պայմանագրում նշված կամ օրենսդրությամբ սահմանված նորմերի գերազանցման դեպքում,

4.3.9 տուժած անձի կողմից դիտավորյալ գործողությունների կատարման, որը պատճառ է հանդիսացել ապահովագրական պատահարի վրա հասնելուն,

4.3.10 ավտոտրանսպորտային միջոցն ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրության տարածքից (ավտոտրանսպորտային միջոցի երթուղուց) դուրս օգտագործման,

4.3.11 ցանկացած ռազմական գործողությունների, միջոցառումների, ուսուցումների (անկախ այն բանից եղել են դրանք հայտարարված, թե ոչ) և նրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմների, զինված ուժերի կամ ահաբեկիչների գործողությունների, ժողովրդական հուզումների և գործադուլների, սաբոտաժի,

4.3.12 ստոմային էներգիայի ցանկացած կիրառման հետևանքով միջուկային պայթյունի, ռադիոակտիվ ճառագայթման կամ ռադիոակտիվ ազդեցության:

4.4 Համաձայն Կանոնների **ապահովագրական պատահար չի համարվում** նաև տուժած անձանց կյանքին և գույքին պատճառված վնասը, եթե՝

4.4.1 Ապահովադիրը (Ապահովագրված անձը) փախուստի է դիմել դեպքի վայրից կամ հրաժարվել է անցնել բժշկական փորձաքննություն, վնասի հասցման փաստի առիթով կամ ապահովագրական պատահարի հետևանքով տուժողներին չի ցուցաբերել անհրաժեշտ օգնություն ու չի դիմել համապատասխան իրավասու մարմիններին (պետավտոտեսչությանը, ոստիկանության մարմիններին, բուժհաստատություններին և այլն) կամ Ապահովագրողին,

4.4.2 վնասի հասցման պահին լրացել են ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական կամ գրանցման սահմանված ժամկետները.

4.4.3 լրացել են «Տարանցիկ» (տրանզիտ) ռեգիստրացիոն նշանների գործողության ժամկետները, եթե նշված ժամկետներում ավտոտրանսպորտային միջոցը (գրանցման ենթակա) չի գրանցվել Պետավտոտեսչության մարմինների կողմից.

4.4.4 լրացել են «Տարանցիկ» (տրանզիտ) ռեգիստրացիոն նշանների գործողության ժամկետները, եթե նշված ժամկետներում ավտոտրանսպորտային միջոցը չի ենթարկվել գրանցման Պետավտոտեսչությունում.

4.4.5 լրացել է ավտոտրանսպորտային միջոցի գրանցման փաստաթղթի (ավտոտրանսպորտային միջոցի գրանցման վկայականի կամ տեխնիկական անձնագրի) ժամկետը,

4.4.6 լրացել է ավտոտրանսպորտային միջոցը վարող անձին պատկանող վարորդական իրավունքի ժամկետը կամ վնասը պատճառվել է վարորդական իրավունք չունեցող Ապահովադրի (Ապահովագրված անձի) կամ առանց վարորդական իրավունքի Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ավտոտրանսպորտային միջոցի շահագործման հետևանքով,

4.4.7 լրացել է սեփականատիրոջ անունից ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման, տնօրինման իրավունք ստացած անձի երթուղային թերթիկի, լիազորագրի կամ այլ փաստաթղթի ժամկետը,

4.4.8 ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) չի կատարել կամ կատարել է ոչ պատշաճ կերպով Կանոններով և ապահովագրության պայմանագրով սահմանված պարտավորությունները:

4.5 Ապահովագրության պայմանագիրը մասնավորապես կարող է բովանդակել հետևյալ լրացուցիչ պայմանները՝

ա) «Մինչև առաջին ապահովագրական դեպքը», որի ժամանակ ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը տարածվում է միայն առաջին անգամ տեղի ունեցած ապահովագրական պատահարի վրա,

բ) «որոշակի օրերի, շաբաթների կամ ամիսների համար պատասխանատվությամբ», որի ժամանակ ապահովագրությունը տարածվում է միայն այն ապահովագրական դեպքերի վրա, որոնք տարածվում են ապահովագրության պայմանագրում նշված կոնկրետ օրերի, շաբաթների կամ ամիսների վրա:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

5.1. **Ապահովագրական գումար** է համարվում այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողն ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարտավոր է կատարել ապահովագրական հատուցում: Ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի համաձայնությամբ և կարող է լինել **ոչ ագրեգատային** և **ագրեգատային**:

Ոչ ագրեգատային ապահովագրական գումարն այն գումարն է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած յուրաքանչյուր ապահովագրական դեպքի համար, ընդ որում ապահովագրական գումարը չի նվազում ավելի վաղ վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով:

Ագրեգատային ապահովագրական գումարն այն գումարն է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների համար, ընդ որում ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով:

5.2. Ապահովագրության պայմանագրում կարող են սահմանվել առանձին ապահովագրական գումարներ (ապահովագրության պայմանագրով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի բաղկացուցիչներ) կապված՝

ա) տուժած անձանց կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հետ.

բ) տուժած անձանց գույքին պատճառված վնասների հետ:

5.3. Ապահովագրության պայմանագրում կարող է սահմանվել առանձին (յուրաքանչյուր) ավտոտրանսպորտային միջոցի համար անհատական ապահովագրական գումար (մեկ ավտոտրանսպորտային միջոցի համար ապահովագրական հատուցման առավելագույն չափ) ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների համար:

5.4. Ապահովադրի դիմումի համաձայն ապահովագրական գումարը կարող է լրացուցիչ ապահովագրավճարի մուծմամբ ավելացվել ապահովագրության պայմանագրի կնքումից կամ Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելուց հետո՝ վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ապահովագրական գումարի ավելացումը ձևակերպվում է լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով:

5.5. Եթե Ապահովադիրն ապահովագրական հատուցում ստանալու օրը չի լրացնում ապահովագրական գումարը համապատասխան ապահովագրավճարի մուծմամբ, ապա ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման չափով, որը կարող է ձևակերպվել համապատասխան համաձայնագրի կնքմամբ կամ առանց դրա:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

6.1 **Ապահովագրավճար** է համարվում ապահովագրության համար նախատեսված այն գումարը, որն Ապահովադիրն ապահովագրության պայմանագրի համաձայն պարտավոր է մուծել Ապահովագրողին: Ապահովագրավճարի մեծությունը սահմանվում է ելնելով ապահովագրական գումարից, ապահովագրական սակագնից, ապահովագրության ժամկետից, չհատուցվող գումարից (ֆրանչիզայից) և կոնկրետ ապահովագրության պայմանները հաշվի առնող կարգավորիչ գործակիցներից:

Ապահովագրական սակագները սահմանվում են Ապահովագրողի կողմից: Մինչև մեկ տարի ժամկետով կնքվող ապահովագրության պայմանագրի համար Ապահովագրողի կողմից տվյալ

ռիսկի համար սահմանած տարեկան ապահովագրական սակագնի նկատմամբ կիրառվում են Ապահովագրողի կողմից սահմանված կարգավորիչ գործակիցներ:

6.2. Ապահովագրավճարի վճարման կարգը որոշվում է ապահովագրության պայմանագրով՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.3. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ կամ մաս-մաս, ընդ որում՝

ա) եթե ապահովագրության ժամկետը մեկ տարուց պակաս է, ապա Ապահովադիրը պարտավոր է ապահովագրավճարը վճարել միանվագ կարգով, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

բ) եթե ապահովագրության ժամկետը մեկ տարի և ավելի է, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրին հնարավորության տալ ապահովագրավճարը վճարել ոչ միանվագ կարգով, այլ ապահովագրության պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում:

6.4. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով՝ Ապահովագրողի դրամարկղ կամ անկանխիկ հաշվարկների միջոցով Ապահովագրողի համապատասխան բանկային հաշվին:

6.5. Ապահովագրավճարի վճարման օր է համարվում՝

ա) կանխիկ դրամով վճարման դեպքում Ապահովագրողի ներկայացուցչին հանձնելու կամ Ապահովագրողի դրամարկղ դրամական միջոցների մուտքագրման օրը.

բ) անկանխիկ հաշվարկների դեպքում Ապահովագրողի հաշվարկային հաշվին դրամական միջոցների ստացման օրը:

6.6. Ապահովագրական գումարի ավելացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է լրացուցիչ ապահովագրավճարը վճարել միանվագ կարգով (եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ): Լրացուցիչ ապահովագրավճարի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

6.7. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

6.8. Եթե ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը, եթե պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

6.9. Եթե ապահովադիրն ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը՝ առանց այդ մասին ապահովադրին ծանուցելու:

7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

7.1. Ելնելով ապահովագրության առանձին պայմաններից ապահովագրության պայմանագրում Կողմերը կարող են սահմանել Ապահովագրողի կողմից չհատուցվող գումարի (ֆրանշիզայի) չափ:

7.2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

7.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե

վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով:

7.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը պակասեցվում է չհատուցվող գումարի չափով:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՍԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

8.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Կողմերի համաձայնությամբ ցանկացած ժամկետով: Այն ավտոտրանսպորտային միջոցների համար, որոնց սահմանված կարգով տրված են «Տարանցիկ» (տրանզիտ) ռեգիստրացիոն նշաններ, որոնց գործողության ընթացքում ավտոտրանսպորտային միջոցը ենթակա չէ գրանցման Պետավտոտեսչությունում, ապահովագրության պայմանագիրը կնքվում է մինչև «Տարանցիկ» (տրանզիտ) ռեգիստրացիոն նշանների գործողության ժամկետի ավարտի օրը:

Եթե ավտոտրանսպորտային միջոցը ապահովագրվել է օրենսդրությամբ սահմանված կարգով տրված ժամանակավոր գրանցման վկայականի հիման վրա, ապա Ապահովադիրը պարտավոր է ավտոտրանսպորտային միջոցի վերջնական տեխնիկական անձնագիրը ստանալուց հետո ողջամիտ ժամկետներում վերջինիս պատճենը ներկայացնել Ապահովագրողին:

8.2. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկիզբն ու վերջը նշվում է ապահովագրության պայմանագրում: Ապահովագրության պայմանագրի ժամկետի սկիզբը չի կարող լինել ապահովագրության պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

8.3. Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրով նախատեսված ժամկետներում հերթական ապահովագրավճարի չմուծման կամ այն ոչ ամբողջությամբ մուծման դեպքում Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը չի տարածվում այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրում նշված հերթական ապահովագրավճարի վճարման օր հանդիսացող ամսաթվին հաջորդող օրվա 00:00 ժամից մինչև պարտքի փաստացի վճարման օր հանդիսացող ամսաթվի 24:00 ժամը:

8.4. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում՝

ա) ապահովագրության պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո.

բ) Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարման պարտականության լրիվ ծավալով կատարման (լրիվ ապահովագրական գումարի վճարման) դեպքում, եթե ապահովագրության պայմանագրում սահմանված է ագրեգատային ապահովագրական գումար: Ընդ որում այս դեպքում ոչ մի փոխադարձ հաշվարկ Կողմերի միջև այլևս չի կատարվում.

գ) Կողմերի համաձայնությամբ.

դ) Ապահովագրության պայմանագրով կամ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում:

8.5. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

8.6. Ապահովադրի պահանջով ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 70 %-ը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք

ընդունվում են ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 80 %-ը:

8.7. Ապահովագրողի պահանջով ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարները ամբողջությամբ, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 70 %-ը:

8.8. Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Ապահովագրության պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահահուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ) կամ ստացել է ապահովագրական հատուցում:

8.9. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ավարտն Ապահովագրողին չի ազատում ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական դեպքերի հետևանքով առաջացած վնասների փոխհատուցումներից:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է անհապաղ, ցանկացած հասանելի եղանակով, 3 օրացուցային օրվա ընթացքում, գրավոր տեղյակ պահել Ապահովագրողին իրեն հայտնի դարձած էական հանգամանքների և փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:

9.2. Ապահովագրողը, հաշվի առնելով իրեն հայտնի դարձած ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքների առկայությունը, կարող է պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխություն կամ ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի վճարում:

Եթե Ապահովադիրը դեմ է ապահովագրության պայմանագրի պայմաններում փոփոխություն մտցնելուն կամ լրացուցիչ ապահովագրավճար մուծելուն, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով լուծել ապահովագրության պայմանագիրը:

9.3. Ապահովադրի կողմից Կանոնների 9.1 կետով նախատեսված պարտավորության չկատարման դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի լուծել ապահովագրության պայմանագիրը և պահանջել ապահովագրության պայմանագրի լուծման հետևանքով պատճառված և օրենսդրությամբ սահմանված կարգով վնասների փոխհատուցում:

Այս դեպքում Ապահովագրողը ռիսկի աստիճանի փոփոխումից հետո առաջացած ապահովագրական դեպքերի նկատմամբ վնասների փոխհատուցման համար պատասխանատվություն չի կրում:

9.4. Կանոնների 9.3 կետով նախատեսված հանգամանքները չեն գործում, եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող գործոնները վերացել են:

10. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Այն բանից հետո, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) տեղեկացվել է ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին, նա պարտավոր է՝

10.1.1. տեղի ունեցած պատահարից հետո **անհապաղ**, ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով հայտնել ստորև նշված նախնական տեղեկատվությունը Ապահովագրողի ներկայացուցիչներին ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով, իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան **24 ժամվա ընթացքում**, չհաշված ոչ աշխատանքային օրերը, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին: Ապահովագրողին ներկայացվող նախնական տեղեկատվությունը պետք է պարունակի՝

ա) Ապահովադիրի անուն, ազգանուն, հայրանունը,

բ) ապահովագրության պայմանագրի (վկայագրի) համարը,

գ) ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը,

դ) տեղեկատվությունը տալու պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ Ապահովադիրին հայտնի ամբողջական հնարավոր տեղեկատվությունը (ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամկետը, վայրը, հնարավոր պատճառները, պատահարի հետևանքով պատճառված վնասվածքների բնույթը):

10.1.2. ստեղծված իրադրությունում ընդունել խելամիտ և հնարավոր միջոցառումներ տուժած անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասների վերացման կամ նվազեցման ուղղությամբ: Այս դեպքում Ապահովադիրը պարտավոր է հետևել Ապահովագրողի ցուցումներին, եթե այդպիսիք նրան տրված են:

10.1.3. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում **անհապաղ** սահմանված կարգով դիմել համապատասխան իրավասու մարմիններին, որոնք լիազորված են իրականացնելու ապահովագրական պատահարի տեղի ունենալու պատճառների և հանգամանքների ուսումնասիրություններ և տալու եզրակացություններ:

10.1.4. Ժամանակին հայտնել Ապահովագրողին՝ տուժած անձանց վնասված գույքի գնումն իրականացնելու ժամկետն ու վայրը և հնարավորություն տալ Ապահովագրողի փորձագետին կամ ներկայացուցչին կատարել պատճառված վնասի ուսումնասիրություն և գնահատում:

10.1.5 պարբերաբար տեղեկացնել Ապահովագրողին տեղի ունեցած դեպքի հետաքննության ընթացքի, նրա պատճառների և հետևանքների մասին, մասնակցել այդ հետաքննությանը:

10.1.6. **անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին**

ա) ապահովագրական պատահար տեղի ունենալու առնչությամբ իրեն ներկայացված գույքային բնույթի բոլոր պահանջների մասին: Այդպիսի պահանջների ստացման դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է նախաձեռնել բոլոր հնարավոր միջոցառումները, որպեսզի տուժած անձը մինչև Ապահովագրողի կողմից իր պահանջների քննարկումը, որևէ հայցով չներկայանա դատարան կամ այլ համապատասխան իրավասու մարմիններին

բ) վնասի հասցման փաստի վերաբերյալ դատական գործի հարուցման և իրավասու մարմինների կողմից քրեական - դատավարական գործողությունների սկսման մասին:

Այն դեպքում, երբ Ապահովադիրը փորձում է կարգավորել հայցերի առումով տուժած անձի հետ հարաբերությունները, սակայն տուժած անձն այնուհանդերձ հայց է ներկայացրել դատարան, իսկ Ապահովագրողի կողմից դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չեն դեպքի հանգամանքները, ապա այս դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողի պահանջով նրան կամ նրա կողմից նշված անձին տալ լիազորագիր՝ Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Պատասխանողի) անունից բոլոր անհրաժեշտ իրավասություններով, այդ թվում՝

- ծանոթանալու ներկայացված հայցին, դրա հետ կապված կատարելու համապատասխան դատավարական գործողություններ՝ նաև ՀՀ Քաղաքացիա-դատավարական օրենսգրքի 42 հոդվածով իրավունքների վերապահումով,

- տուժած անձանց և նրանց ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելու համար,

- հասցված վնասի պատճառների, չափերի և հանգամանքների պարզաբանման նպատակով միջոցառումներ ձեռնարկելու համար:

10.1.7. Առանց Ապահովագրողի համաձայնության կամավոր կերպով չընդունել ապահովագրական պատահարի հետ կապված որևէ պահանջներ, իր վրա չվերցնել ոչ մի պարտականություն այդ պահանջների կարգավորման համար, ինչպես նաև չհատուցել պատճառված վնասը:

10.1.8. Ապահովադիրը (ավտոմեքենան վարելու համար Ապահովադրի կողմից լիազորված անձը) Կանոններով նշված ցանկացած վթարի դեպքում իրավունք չունի ինքնակամ լքել վթարի վայրը և պարտավոր է ներկա գտնվել պատահարի գրանցման բոլոր գործըթացներին՝ կատարելով լիազորված պետական իրավասու մարմինների և Ապահովագրողի պատահարի հետ կապված պահանջները և ցուցումները: Ապահովադիրը (Ապահովադրի լիազորված անձը, Շահառուն) պարտավոր է նաև պատահարը տեղի ունենալուց հետո առանց Ապահովագրողի համաձայնության չսկսել ավտոտրանսպորտի վերանորոգման աշխատանքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս պայմանավորված է վարողի կամ ուղևորների անվտանգության ապահովման կամ այն անհրաժեշտ է իրավասու պետական մարմինների ցուցումով և հրահանգով:

10.2 Եթե Ապահովադիրն (Ապահովագրված անձը) Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Կանոնների 10.1.1 կետում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

10.3. Ապահովագրական հատուցում իրականացնելու համար Ապահովագրողին ներկայացվում է՝

ա) դիմում,

բ) ապահովագրության պայմանագրի բնօրինակը (Ապահովադրի մոտ առկա տարբերակը),

գ) համապատասխան լիազորված մարմինների (պետավտոտեսչություն, ոստիկանություն) կողմից կնիքով վավերացված փաստաթղթերը, որոնք պետք է ներառեն հետևյալ պարտադիր տվյալները՝

- այն անձի անուն, ազգանուն, հայրանունը, որին տրվել է սույն ենթակետում նշված փաստաթուղթը,

- պատահարի տեղի ունենալու ժամը, ամսաթիվը և վայրը,

- պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ տեղեկություններ (մակնիշը, պետական գրանցման նշանը, շարժիչի համարը, թափքի համարը) ավտոտրանսպորտային միջոցի վնասվածքի բնույթը, որոնք հայտնաբերվել են արտաքին զննմամբ, ինչպես նաև այդ վնասվածքների տեղը,

- ապահովագրական պատահարի հանգամանքները, մասնակիցների անուն, ազգանուն, հայրանունը և գրանցման հասցեն, ինչպես նաև ապահովագրական պատահարի հետևանքով վնասված՝ երրորդ անձանց պատկանող ավտոտրանսպորտային միջոցի մասին տեղեկատվություն (մակնիշը, պետ. գրանցման նշանը, շարժիչի համարը, թափքի համարը), երրորդ անձանց պատկանող ավտոտրանսպորտային միջոցի վնասվածքի բնույթը, որոնք հայտնաբերվել են արտաքին զննմամբ, ինչպես նաև այդ վնասվածքների տեղը,

- այն անձանց անուն, ազգանուն, հայրանունը և գրանցման հասցեն, որոնց վնաս է հասցվել ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում,

- այն անձի անուն, ազգանուն, հայրանունը և գրանցման հասցեն, որը իրավախախտման համար կրում է վարչական պատասխանատվություն,

- քրեական գործի հարուցման մասին տեղեկատվություն,

- համապատասխան փաստաթուղթը տվող անձի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը և հայրանունը,

դ) ապահովագրական պատահարի հանգամանքներին և պատճառված վնասի չափին վերաբերող փաստաթղթերը (վնասված գույքի հետազոտման վերաբերյալ ակտեր, հաշիվ ապրանքագրեր, չեկեր, անդորրագրեր, փորձագետների կողմից տրված եզրակացություններ և այլն),

ե) դատական ակտեր (այն դեպքում, երբ գործերը քննվել կամ քննվում են դատարանում),

- զ) բժշկական հաստատությունների կողմից տրված, գլխավոր բժշկի կողմից ստորագրված փաստաթղթերը կամ բժշկա-սոցիալական փորձաքննության համապատասխան մարմինների եզրակացությունը, եթե վնաս է հասցվել երրորդ անձանց առողջությանը,
 - է) մահվան վկայականը և ժառանգության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները (տուժողի մահվան դեպքում),
 - ը) ավտոտրանսպորտային միջոցի գրանցման վկայականի և տեխնիկական անձնագրի պատճենները,
 - թ) վարորդական իրավունքի պատճենը,
 - ժ) ուղեգիր, լիազորագիր կամ սեփականատիրոջ կողմից ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման կամ տնօրինման իրավունքը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,
 - ժա) տրանսպորտային գործունեության իրականացնելու իրավունքի լիցենզիան և համապատասխան լիցենզիայի (արտոնագրի) թերթիկը, եթե տվյալ տրանսպորտային գործունեությունը օրենսդրության համապատասխան ենթակա է լիցենզավորման,
 - ժբ) պետռեզիստի կողմից տրված իրավաբանական անձի գրացման վկայականի պատճենը, եթե Ապահովադիրը հանդիսանում է իրավաբանական անձ,
 - ժգ) անձնագրի (զինվորական ծառայողների համար անձը հաստատող փաստաթղթի) պատճենը, եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) հանդիսանում է ֆիզիկական անձ:
- 10.4. 10.3. կետում նշված փաստաթղթերի պատճենները Ապահովագրողին ներկայացնելու դեպքում, դրանց իսկությունը պարզելու նպատակով պետք է ներկայացվեն նաև այդ փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերի ստացման փաստը, հաստատվում է Ապահովագրողի լիազոր ներկայացուցչի կողմից համապատասխան գրանցում կատարելով:

10.5. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Կանոնների 10.3 կետում նշված փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել Ապահովագրողին՝ դեպքի վերաբերյալ գրավոր դիմում ներակայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում: Այդ ժամկետում Ապահովադիրը (Ապահովագրված անձի) կողմից Կանոններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Ապահովադիրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովադիրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

10.6. 10.4. և 10.5. կետերում նշված դրույթները տարածվում են նաև Շահառուի վրա, եթե վերջինս ապահովագրական հատուցման ստացման համար ուղղակիորեն դիմել է Ապահովագրողին:

10.7. Ելնելով տեղի ունեցած պատահարի հանգամանքներից՝ Ապահովագրողն իրավունք ունի կրճատել ներկայացվող փաստաթղթերի 10.4. կետում նշված ցանկը, ինչպես նաև չպահանջել Ապահովադիրից (Ապահովագրված անձից, Շահառուից) այնպիսի փաստաթղթեր, որոնց առկայության հանգամանքը Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) մոտ ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հաստատված է համապատասխան իրավասու (լիազորված) մարմինների կողմից տրված փաստաթղթերով:

10.8. Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրից (Ապահովագրված անձից) պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, եթե հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները, վերջիններիս բացակայությունը անկարելի է դարձրել պատահարի տեղի ունենալու փաստի ճանաչումը և վնասի չափի որոշումը:

10.9. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

10.10. Ապահովագրողն իրավունք ունի գնել Ապահովադրի ավտոտրանսպորտային միջոցը, որի օգտագործման հետևանքով տուժած անձին վնաս է հասցվել և տուժած անձի նկատմամբ կազմակերպել անկախ փորձաքննության անցկացում: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով փորձաքննության տրամադրել տվյալ ավտոտրանսպորտային միջոցը:

10.11. Ապահովագրական պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետի՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

Եթե ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասը Ապահովագրողի պատվերով գնահատվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպության կամ անկախ փորձագետի կողմից, ապա դրանց հետ կապված ծախսերը կրում է Ապահովագրողը: Այդ դեպքում ապահովագրական հատուցման չափը Ապահովագրողի կողմից որոշվում է վերջիններիս կողմից տրամադրված փորձագիտական եզրակացության (որտեղ գնահատվում է վնասի մեծությունը) հիման վրա:

10.12. Ապահովագրողն իրավունք ունի նաև ինքնուրույն կերպով՝ իր համապատասխան ստորաբաժանման կամ աշխատակցի միջոցով գնահատելու պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը և դա հիմք ընդունելու ապահովագրական հատուցման չափի որոշման համար:

10.13. Ապահովադիրն իրավունք ունի չհամաձայնվել Ապահովագրողի կողմից կամ Ապահովագրողի կողմից ներգրավված մասնագետների (փորձագետների) կողմից կազմված փորձագիտական եզրակացության հետ և պահանջել այլ անկախ փորձագետի կողմից փորձաքննության անցկացում: Այդ դեպքում անկախ փորձագետի վարձատրության ծախսերը կատարվում են Ապահովադրի կողմից: Ապահովագրողն իր հերթին կարող է համապատասխան հիմնավորմամբ չընդունել Ապահովադրի փորձագետի եզրակացությունը:

10.14. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոնների 10.3 և 10.8, կետերում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

10.15. Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովադրի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովադրին (Շահառուին):

10.16. Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով:

10.17. Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի ճանաչման դեպքում Ապահովագրողը կատարում է ապահովագրական հատուցում տուժած անձանց կյանքին, առողջությանը և (կամ) գույքին պատճառված վնասի չափով (փողով), բայց ոչ ավել, քան

ապահովագրության պայմանագրում նշված տվյալ ապահովագրական պատահարի համար սահմանված ապահովագրական գումարը:

Ապահովադրի (Շահառուի) համաձայնությամբ ապահովագրական հատուցումն Ապահովագրողի կողմից կարող է վճարվել նաև համարժեք գույքով, բայց ոչ ավել, քան ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափին համարժեք գույքը:

11.2. Ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են՝

ա) օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն հատուցման պահանջի իրավունք ունեցող տուժած անձանց պատճառված իրական վնասները, ընդ որում՝

1. *Ֆիզիկական անձի առողջությանը վնաս հասցնելու կամ նրա մահվան դեպքում իրական վնասը ներառում է՝*

- ողջամիտ ծախսեր, որոնք անհրաժեշտ են առողջության վերականգնման (բուժման, ավտոտրանսպորտային ծախսերի, վճարովի բժշկական ծառայության և այլ ծախսերի) համար, բայց ոչ ավել, քան ապահովագրության պայմանագրում նշված տվյալ ապահովագրական դեպքի համար սահմանված ապահովագրական գումարի չափը,

- հուղարկավորության հետ կապված ծախսեր, բայց ոչ ավել, քան ապահովագրության պայմանագրում նշված տվյալ ապահովագրական դեպքի համար սահմանված ապահովագրական գումարի չափը:

2. *Ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանող գույքին պատճառված վնասի դեպքում՝* ծախսերը որոշվում են գույքի վնասման կամ ոչնչացման ժամանակ առաջացած փաստացի և իրական վնասի չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրության պայմանագրում նշված տվյալ ապահովագրական դեպքի համար սահմանված ապահովագրական գումարի չափը, ընդ որում.

- գույքի լրիվ ոչնչացման դեպքում իրական վնասը հավասար է նախքան դեպքի տեղի ունենալը ոչնչացված գույքի իրական արժեքից մասհանելով մաշվածությունը և օգտագործման համար պիտանի մնացորդների գումարը,

- գույքի մասնակի վնասման դեպքում իրական վնասը որոշվում է այն գումարի մեծությամբ, որն անհրաժեշտ է գույքը նախքան դեպքի տեղի ունենալուն նախորդող վիճակին բերելու համար:

բ) Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա (գույքին վնաս հասցնելու դեպքում) նաև՝

- երրորդ անձանց պատկանող ավտոտրանսպորտային միջոցի ավտոմեքանի վայրից տեղափոխման (էվակուացման) համար կատարված ծախսերը, եթե վնասի առաջացման մեջ հիմնավորված է Ապահովադրի (Ապահովագրված անձի) մեղքը, միաժամանակ այդ ավտոտրանսպորտային միջոցների վնասվելու հետևանքով նրանց հետագա շահագործումն անթույլատրելի կամ տեխնիկապես անհնարին է,

- դիսպետչերական ծառայություններին վճարվելիք ծախսերը, որոնք կապված են ավտոտրանսպորտային միջոցը տեղափոխողի կանչման հետ,

- Ապահովագրողի կողմից անկախ փորձագետի վճարման հետ կապված ծախսերը:

Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից երրորդ անձանց վնասված ավտոտրանսպորտային միջոցների տեղափոխման (էվակուացման) հետ կապված ծախսերը չեն կարող գերազանցել՝

- 10 000 ՀՀ դրամ չափը, այն ավտոտրանսպորտային միջոցների համար, որոնց ծանրությունը չի գերազանցում 3.5 տոննան,

- 15 000 ՀՀ դրամ չափը, այն ավտոտրանսպորտային միջոցների համար, որոնց ծանրությունը գերազանցում է 3.5 տոննան:

Սույն կետում նշված ծախսերի չափը նախքան դատարան դիմելը հայցերի կարգավորման դեպքում որոշվում է Ապահովագրողի և հայց ներկայացրած անձի միջև փոխհամաձայնությամբ և Ապահովադրի (Ապահովագրված անձի) մասնակցությամբ: Փոխհամաձայնության չգալու դեպքում հասցված վնասի հատուցման չափը որոշվում է դատական կարգով՝ օրենսդրությանը համապատասխան:

գ) Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից վնասի փոքրացմանն ուղղված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել և կատարվել են Ապահովագրողի ցուցումներն իրականացնելու համար (հատուցվում են օրենսդրությամբ սահմանված կարգով):

դ) Գատական մարմիններում ապահովագրական պատահարի հետ կապված գործի վարման համար կատարված ծախսերը, եթե այդ ծախսերը կատարվել են Ապահովագրողի գրավոր ցուցումների համաձայն կամ նրա գրավոր համաձայնությամբ:

11.3. Յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ապահովագրական պայմանագրում նշված ընդհանուր ապահովագրական գումարի չափը:

11.4. Կանոնների 11.2 կետի ա) ենթակետում սահմանված դեպքերում ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրական պատահարի հետևանքով անմիջապես տուժած անձին (Շահառուին)՝ համաձայն ապահովագրական հատուցման մասին դիմումում նշված տվյալների:

Կանոնների 11.2. կետի գ) և դ) ենթակետերում սահմանված դեպքերում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրին (Ապահովագրված անձին):

11.5. Ապահովագրական հատուցման վճարման ամսաթիվ է համարվում՝

- կանխիկ հաշվարկների դեպքում Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Ապահովագրողի դրամարկղից դրամական միջոցների ստացման օրը,

- անկանխիկ հաշվարկների դեպքում Ապահովագրողի հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրսգրման օրը:

11.6. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու օրը Ապահովադրի (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվությունը պատճառված վնասի նկատմամբ ապահովագրված է նաև այլ ապահովագրական ընկերություններում, ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում այն չափով, որքանով որ Ապահովագրողի ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը համամասնական է բոլոր ապահովագրության պայմանագրերով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարների հանրագումարին:

Ապահովադիրը պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովագրողին բոլոր գործող ապահովագրական պայմանագրերի մասին՝ նշելով ապահովագրական ընկերությունների անվանումները, ապահովագրական ռիսկերը և ապահովագրական գումարների չափերը:

11.7. Եթե տուժած անձանց պատճառված վնասը, բացի Ապահովադրից (Ապահովագրված անձից) ենթակա է հատուցման նաև այդ վնասի համար պատասխանատու այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է միայն դեպքի հետևանքով հատուցման ենթակա լրիվ գումարի և սույն կետում նշված անձանցից գանձման ենթակա գումարի տարբերությունը, սակայն ոչ ավել, քան ապահովագրության պայմանագրում նշված տվյալ ապահովագրական դեպքի համար սահմանված ապահովագրական գումարի չափը:

Ապահովադիրը պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովագրողին այդ անձանց գոյության և նրանցից գանձման ենթակա գումարների չափերի մասին:

11.8. Ապահովագրավճարի տարածամկետ (մաս-մաս) վճարման դեպքում հատուցման ենթակա գումարից Ապահովագրողի կողմից պահվում է հերթական չվճարված ապահովագրավճարը և եթե ապահովագրական պատահարից մինչև ապահովագրական հատուցման վճարման ժամկետի ընթացքում ապահովագրության պայմանագրով սահմանված է ապահովագրավճարի (դրա մի մասի) վճարման ժամկետ և Ապահովադրին այն չի կատարել:

Ապահովագրական հատուցման գումարից չի պահվում չվճարված հերթական ապահովագրավճարի մեծությունը, եթե մեկ ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի մեծությունն ավելի քիչ է, քան չվճարված ապահովագրավճարի չափով պակասեցված տվյալ պատահարի համար սահմանված ապահովագրական գումարի մեծությունը (վերջինս հաշվարկվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվանից):

11.9. Ապահովագրության պայմանագրով նախատեսված դեպքում, ապա ապահովագրական հատուցման գումարից պահվում է նաև ոչ պայմանական չհատուցվող գումարը (միայն երրորդ անձանց գույքին վնաս պատճառելու դեպքում):

11.10 Ապահովագրողն ազատվում է Կանոնների 10.1.2 կետով նախատեսված Ապահովադրի (Ապահովագրված անձի) պարտականությունների չկատարման հետևանքով առաջացած լրացուցիչ վնասների համար ապահովագրական հատուցում վճարելու իր պարտականությունից:

11.11. Ապահովագրական հատուցման ենթակա չեն ապրանքային տեսքի կորուստը, վնասված գույքը վերականգնելուց հետո առաջացած գույքի շուկայական արժեքի նվազման ծախսերը, բարոյական վնասները, անուղղակի վնասները և տուժած անձանց ծախսերը, որոնք կատարվել կամ պետք է կատարվեն խախտված իրավունքը վերականգնելու համար, չստացված եկամուտը, որն այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

11.12. Եթե օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է վճարել փոխհատուցում ամսական կտրվածքով կամ այլ կանոնավոր վճարելաձևերով, ապա Ապահովագրողն իրավունք ունի կատարել ապահովագրական հատուցման միանվագ վճարում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

11.13. Ապահովագրողն իրավունք ունի երկարացնել ապահովագրական հատուցման վճարման ժամկետը, եթե՝

ա) նշանակված է լրացուցիչ փորձաքննություն ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասի մեծության որոշման նպատակով: Այս դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Կանոնների 10.13. կետի ա) ենթակետում նշված ժամկետում՝ հաշվարկը սկսելով Ապահովագրողի կողմից լրացուցիչ փորձաքննության հետ կապված փաստաթղթերի ստացման օրվանից.

բ) Ապահովագրական պատահարի փաստի առիթով հարուցված է քրեական գործ: Եթե տեղի ունեցած պատահարի առնչությամբ իրավասու պետական մարմինների կողմից հարուցված է քրեական գործ, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցում վճարելու կամ այն մերժելու մասին Կանոններով և այլ իրավական ակտերով նախատեսված եզրակացությունն Ապահովադիրին (Ապահովագրված անձին, Շահառուին) տրամադրում է միայն քրեական գործի ավարտի կամ կասեցման վերաբերյալ Ապահովադրից (Ապահովագրված անձից, Շահառուից) համապատասխան փաստաթղթերն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ժամկետում:

11.14. Եթե ապահովագրական պատահարի հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերից բխի, որ Ապահովադիր (Ապահովագրված անձի) և տուժած անձի (Շահառուի) մեղավորությունը երկկողմանի համահավասար է, ապա Ապահովագրողն իրավունք ունի Շահառուին կատարել ապահովագրական հատուցում՝ կախված ապահովագրական պատահարում նրա ունեցած մեղքի աստիճանից և ընդհանուր պատճառված վնասի մեծությունից: Այդ մեղքի աստիճանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա և Կողմերի համաձայնությամբ, իսկ փոխհամաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

11.16. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելու մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

12.2 Վիճելի հարցերի լուծման ժամանակ ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ: